

ԴԱՍ 6

ԲՈՅՄԻՆ ԱՃՈՒՄԸ ԵՒ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

ԲՈՅՄԻՆ ԱՃՈՒՄԸ


Բոյսը իր արմատին եւ տերեւներուն միջոցով սնունդ կը ստանայ արտաֆին միջավայրէն.—

հող, ջուր, օդ եւ լոյս:

Ունենալ.— պարտէզի հող, 2 փոփր թաղարներ, 6 հատ լուբիայի հունտ:

Փորձ.

1. Պարտէզի հող լեցուր թիւ 1 եւ 2 թաղարներուն մէջ:
2. Իւրաքանչիւր թաղարի մէջ ցանէ լուբիայի 3 հունտ:
3. Հայթայթէ՛ օդ, լոյս եւ խոնաւութիւն թիւ 1 թաղարին, իսկ միայն օդ եւ լոյս թիւ 2 թաղարին:



Շաբար մը խնամելէ ետք ի՞նչ փոփոխութիւն կը տեսնես:

Բոյսը առանց ջուրի չ'ապրիր:


Արմատը կը ծծէ ջուրը, որ կը բարձրանայ ցօղունին եւ կը տարածուի տերեւներուն մէջ:

ԲՈՅՍԻ ՄԸ ՏԵՐԵՒԸ ՋՈՒՐ ԿՐ ՍՏԱՆԱՅ

Ունենալ.— ձերմակ մեխակ մը, գաւաթ մը եւ մեկան (կարմիր կամ կապոյտ):

Փորձ.

1. Մեխակի մը կոթունը 15 սմ. երկարութեամբ կտրէ:
2. Ջուրով լեցուն գաւաթին մէջ 3-5 կաթիլ մեկան դիր:
3. Դի'ր մեխակը գունաւոր ջուրին մէջ, մօտաւորապէս կէս ժամ:



Ի՞նչ կը պատահի:



Ո՞ր միջավայրին մէջ բոյսը առողջ ու լաւ աճած է:

Ինչո՞ւ:


Բոյսերը կը ծլին, կ'անին ու կը մեծնան:
Տարբեր երկարութեամբ կեանք ապրելէ ետք,
անոնք օր մըն ալ կը շոքնան ու կը փտին:

Բոյսի անման ընթացքին արմատները, ցօղունը
եւ ճիւղերը կ'անին իրենց ծայրամասերով:

ԼՈՅՍԻ ԱԶԳԵՑՈՒԹԵԱՆ ՏԱԿ ՅՕՂՈՒՆԸ ԿՐՆԱՅ ԾՌԻԼ:

Ունենալ. — տուփ, թաղար:
Փորձ.

1. Խաւաքարտէ տուփի մը
ներսի կողմը սեւ թուղթով
պատէ (տես պատկերը):
2. Տուփին մէջ դիր թաղար
մը:
3. Տուփին բաց մասը լուսա-
ւոր պատուհանի մը դի-
մաց դիր:



Ի՞նչ կը պատահի.

.....
.....



Ամբողջացո՛ւր:

Չախ պատկերը ցոյց
կու տայ թէ բոյսը

Աջ պատկերը ցոյց կու
տայ թէ բոյսը

.....

Բոյսերը կենդանիներու նման նոյնքան արա-
գութեամբ լոյսէն կ'ազդուի՞ն:

ԲՈՅՍԻ ԲԱԶՄԱՅՈՒՄԸ

Բոյսերը ապրող էակներ են:

Կը ծնին, կ'անին ու կը բազմանան:

Բոյսերը մարդոց եւ անասուններու նման տեղափոխուելու եւ զգալու կարողութիւն ունի՞ն:

:

Գրէ՛ բոյսին մասերը.

1.—

2.—


3.—

4.—

Բոյսերը անելու համար պէտք ունին,

.....,,

.....:




Բոյսերը քէն գուրկ են զգալու եւ փալելու կարողութենէն, սակայն ունին կենսական երեք տեսակի գործարաններ.— շնչառութեան, սրնընդառութեան եւ բազմացումի:

Բոյսի շնչառութեան գործարաններն են արմատն ու տերեւները:

Սննդառութեան գործարաններն են արմատը, ցօղունը եւ տերեւները:


Բազմացումի գործարաններն են ծաղիկը, պտուղը եւ հունտերը:



ԾԱՂԻԿ


Ծաղիկը բոյսին ամենէն գեղեցիկ մասն է:

Ծաղիկները զանազան չափեր, ձեւեր ու գոյներ կ'ունենան:



ՆԱԳԻԿԻՆ ՄԱՍԵՐԸ

Ծաղիկին գլխաւոր մասը պսակն է, որ կազմւում է բազմաթիւ թերթերէ: Պսակին տակ կայ բաժակը, որ կազմուած է քանի մը սրածայր փերթերէ: Պսակին կեդրոնը կլոր գլուխով ցրցւած թելեր կան, այդ թելերը կը կոչուին առէջներ: Առէջները կցուած են ձուարանին: Ձուարանն է, որ մեծնալով պտուղի կը վերածուի:



Իւրաքանչիւր բոյսի նոյնատեսակ նոր բոյսերու ծնունդ տալու յատկութիւնը բազմացում կը կոչուի:

Ի՞նչպէս կրնանք նոր բոյս մը ստանալ հունտէն:

Գծելով պատասխանէ:

Բազմաթիւ բոյսերու պարագային, բազմացնելու համար հունտը չենք ցաներ, այլ՝ սոխը կը ցանենք: Այս տեսակի բոյսերը սոխազգիներ կամ շուշանազգիներ կը կոչենք:



Շուշանազգիներու ընտանիքին մէջ կ'իյնան շարք մը շատ գեղատեսիլ ծաղիկներ, ինչպէս շուշանը, լեռնաշուշանը, նարկիզը եւ կակաչը: Միեւնոյն ընտանիքին կը պատկանին նաեւ սննդարար, բայց ոչ հանելի հոտով սխտորը, սոխը եւ պրասը:



նարկիզ



կակաչ



ուտելիք սոխ

Բոյսերու արագ բազմացման համար, կարելի է նաեւ բողբոջներ կրող նիւղ մը կտրել եւ ջուրի մէջ դնել: Ճիւղին կտրուածքէն առաջ կու գան ինքնաբոյս արմատներ եւ նիւղը կը դառնայ իսկական լման բոյս մը:



Գիտե՞ս, ինչի՛ կը վերածուին պտղատու ծառե-
րուն ծաղիկները:



Պտղատու ծառերն ալ կրնանք բազմացնել, հունտերէ կամ կուտերէ: Հողին մէջ թաղուած հունտերը, խոնաւութեան, օդին եւ արեւու լոյսի ջերմութեան ազդեցութեան տակ կը ծլին եւ ծնունդ կու տան բոյսերուն: Սակայն երկար տարիներ պէտք է սպասել, որպէսզի բոյսը մեծ-նայ եւ պտուղ տայ. ուստի արագ արդիւնքներ տուող միջոցներու կը դիմենք:

Պտղատու ծառէն բողբոջներ կրող նիւղ մը կ'անոնենք եւ գայն կը տնկենք հողին մէջ: Ճիւղին կտրուածքէն յառաջ կու գան ինքնաբոյս արմատներ եւ նիւղը կը դառնայ իսկական լման տունկ մը: Բողբոջները կը զարգանան եւ ծնունդ կու տան նոր տերեւներու եւ ծաղիկնե-րու: Այս ձեւը շաշ կը կոչուի: Անշուշտ ամէն ծառ միեւնոյն յաջողութեամբ կարելի չէ շաշի ենթարկել:

Կան բոյսեր, որոնք կ'ենթարկուին արագ բազմացման, որ կը կոչուի *աղուրայ*:

Բնական աղուրայի ենթակայ բոյս մըն է ելակենին:



Ելակենին կ'արձակէ սողացող ցողուններ: Եթէ այդ ցողունին պտուկները հողին վրայ հանգչին, անոնցմէ ծնունդ կ'առնեն օժանդակ արմատներ, որոնք կը մխրնուին հողին մէջ. այդ օժանդակ արմատները իրենց կարգին ծնունդ կու տան ելակենիի նոր ցողուններու, տերեւներու եւ ծաղիկներու: Անկէ ետք կարելի է նոր տունկը բաժնել մայր տունկէն:

Կարելի՞ է արուեստական աղուրայ իրագործել: Ի՞նչպէս:

Գժէ՛ արուեստական աղուրայ մը (որքատունկի պարագան):

Ամբողջացո՛ւր:

Ապրող, սննդարար, պտուղի, չունին, տերեւ, սոխազգիներու, պսակն, տեղափոխուելու, բուն, հոտ, արմատին, արմատ, ցօղուն:

- Բոյսերը էակներ են, անոնք
 Եւ գգալու կարողութիւն:
- Բոյսի շնչառութեան ու սննդառութեան գործարաններն են,,
- Պտղատու ծառերուն ծաղիկները կը վերածուին:
- Ծաղիկին գլխաւոր մասը է:
- Սոխը, սխտորն ու պրասը ուտելիքներ են բայց հանելի չունին: Անոնք ընտանիքին կը պատկանին:
- Ցօղունը շարունակութիւնն է: Ծառերու ցօղունը կը կոչուի:

Ամբողջացո՛ւր:

1.
2.
3.
4.
5.
6.

